

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԻ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ. ԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն Գեր. առաջնորդին Հայոց Վրաստ. և Իմերեթի, որով պատուիրի արձակեալ համարել զատենադպիր Կոնսիստորիային զՑարութիւն Տ. Եսայեան, ըստ խնդրանաց նորա՝ տալով նմա ժամանակաւոր ի տարին 300 ր. նպաստ և ցուցակ ծառայութեան. թ. 11։

— Ցանուն փոխանորդի վիճ. ին Ն. Նախիջևանի Տ. Մուշէ վարդապետի, որով տան հրահանգք քահանայից տեղւոյն վասն կատարելոյ զհոգևոր պէտս վերաբնակչաց ի քաղաքին. թ. 19։

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրի մէն մի վարչութեան Մայր վանուցս՝ կազմել զնախահաշիւ տոյն 1903 ամի. թ. 24։

— Ցանուն Տ. Մամբրէ վարդապետի, որով կարգի ի տեսուչ տպարանի Մայր Աթոռոյ, ի տեղի Տ. Մատթէոս վարդապետի. թ. 67։

— Ցանուն Վան. կառավարութեան Մ. Աթոռոյ, որով պատուիրի յղել ուսանող Մկրտչի Ղազարեան, միաբանի Մ. Աթոռոյ, 400 ր. նպաստ՝ առ ի տպագրել զշարադրութիւն իւր, որով ընկալաւ զաստիճան դոկտորի փիլիսոփայութեան, և վերադառնալ ի Մ. Աթոռս. թ. 68։

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, ընդ որում յղելով զբացատրութիւն վանահօր Ս. Խաչ վանուց Արդեազու, Սարգիս վարդ.-ի, պատուիրի ենթարկել զնա պատասխանատուութեան. թ. 69։

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով տայ գիտել, եթէ կարգեալ է ի վանահայր Զարեքայ վանուց Տ. Վահան վարդ. Գէորգեան. թ. 70։

— Յանուն Գեր. Յուսիկ եպիսկոպոսի, ընդ որում յղեցաւ կանոնադրութիւն թեմին Հայոց Ատրպատականի ի քննել և մշակել ընդ քանի մի անձանց և յետ սրբագրութեանն մատուցանել Նորին Ս. Օծութեան. թ. 86։

— Յանուն Գրիգոր աւագ քահանայի Խորասանճեան Օղեսայի, ընդ որում յղելով գհաւատարմագիրն, ստորագրեալ ի Տ. Սահակ եպիսկոպոսէ Վանայ, ի տեսչէ Հայկազեան—կեդրոնական և ի տեսչուհւոյ Սանդխտեան վարժարանաց, պատուիրի ստանալ զվեցամսեայ տոկոսիս Սերեբրենիկեան կտակին (որոյ գումարն է 24,000 ր.) և յղել ասա ի հասուցանել ի Վան. թ. 90։

Հայրապետական պարգեւք.

Շնորհեցաւ կոչումն և պատիւ արքեպիսկոպոսութեան Գերաշնորհ եպիսկոպոսացն՝ Տ. Վահրամայ եպիսկոպոսի Մանկունեաց, Բ. Ատենապետին Կրօն. ժողովոյ Կ. Պոլսոյ, և Տ. Ստեփանոս եպիսկոպոսի Յովակիմեան՝ թեմական առաջնորդի վիճակին Նիկոմիդիոյ. թ. 50, 51։

— Շնորհեցաւ լանջախաչ վարդապետական Արժ. Տ. Մարտիրոս ա. քհ-ի Տ. Պօղոսեան Աղէքսանդրապոլ քաղաքի. թ. 35։

— Շնորհեցաւ կոչումն աւագ քահանայութեան Արժ. Գաբրիէլ քահանայի Տ. Գաբրիէլեան Տփխեաց. թ. 45։

— Շնորհեցան իրաւունք կամիլաւկայի Տ. Ներսէս քահանայի Տ. Վարդանեան Ղամարլու գեղջ և Տ. Դաւուտ քահանայի Տ. Մինասեան Ղփչաղ գեղջ. թ. 36, 37։

— Շնորհեցան լանջախաչք հարց քահանայից՝ Տ. Յովհաննէսի Զուբարեան, Տ. Ռուբենի Բէգկիւլեանց, Տ. Ղեւոնդի Պապիկեան, Տ. Բարդուղիմէոսի Մարկոսեան, Տ. Բաղրատայ Սուքիասեանց, Տ. Սահակայ Աբրահամեան, Տ. Սարգսի Տ.

Գրիգորեան, Տ. Սրապիոնի Տ. Յովհաննիսեանց, Տ. Սահակայ Աբրահամեան, Տ. Մեսրոպի Դաւթեան, Տ. Յակոբայ Տ. Յակոբեան. թ. 14, 34, 38, 40, 41, 42, 43, 44, 47, 48, 49:

Հայրապետական զոհունակութիւնք եւ օրհնութիւնք.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան յանուն Տիկ. Զավահիրի Սահակեան Պօղոսեանց Բագուեցւոյ, վասն նուիրելոյ նորա զսպիտակ կերպաս շապկացուս ի գործածութիւն դպրապետաց Մայր տաճարի. թ. 27:

— Գոհունակութեան և օրհնութեան յանուն Պ. Ստեփանոսի Յովհաննիսեան Պօղոսեանց Հ. Նախիջևանցւոյ, վասն նուիրելոյ նորա զերկուս ծաղկեայ կերպասեայ շուրջառս ի սպէաս Մայր Տաճարի. թ. 91:

—Գոհունակութեան և օրհնութեան յանուն պ. Աւետիսի Յովհաննիսեան Պօղոսեանց Հ. Նախիջևանցւոյ, վասն կանգնելոյ ծախիւք իւրովք զարձան Գամառ—Քաթիպայի ի դաւթի Հոգևոր ճեմարանի Մ. Աթոռոյ. թ. 92:

— Գոհունակութեան և օրհնութեան յանուն պ. Գրիգորի Զաքարեան Թումանեանց, վասն կառուցանելոյ զշինութիւն Օրիորդաց դպրոցին Լիլառայ Թաղի Դավրիժոյ, որ կոչի Թամարեան. թ. 111:

ՔԱՂՈՒԱՆՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Հոկտ. 27. Սինօդը հրամայեց լուծել Զէյվա գիւղացի Մանիա Յովակիմեանի և Դաւիթ Գէորգեանի պսակը, վերջինս Սիբիր աքսորուած լինելու պատճառով:

Դեկտ. 11. Սինօդը հրամայեց թոյլ տալ Գեղարդայ վանքի վանահայր Տ. Վահրամ վարդապետին, համաձայն սորա խնդրանքին, այգի տնկել վանքապատկան հողի վերայ իր